«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

ՀՈՒՆՎԱՐԻ 7, 1999 թվ. Թիվ 23

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, 1998 ԹՎ.

Հայ-վրացական հարաբերություններն արդի փուլում

ՆԻԿՈԼՈԶ ՆԻԿՈԼՈԶԻՇՎԻԼԻ
ՀՀ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան

Հայ-վրացական հարաբերություններին առնչվող թեման այնքան ընդգրկուն է, որ դժվար թե մեկ դասախոսության սահմանափակ ժամանակում հնարավոր լինի հանգամանորեն անդրադառնալ դրանց բոլոր տեսանկյուններին: Առավել ևս՝ այդ թեման լուսաբանել անհնար է, առանց պատմական ավանդույթներին որոշակի հղումներ կատարելու, մեր երկու ժողովուրդների անցյալի փոխհարաբերությունները, տարածաշրջանում զարգացող գործընթացները (նկատի է առնվում ոչ միայն նախ և առաջ Հարավային Կովկասն, այլև լայնածավալ գոտի՝ ողջ Կովկասը), ԱՊՀ-ում, Կենտրոնական Ասիայում, Իրանում և Թուրքիայում զարգացող գործընթացների համատեքստում տարածաշրջանի երկրների և քաղաքական սուբյեկտների համագործակցությունը հաշվի առնելու:

Պատմական ավանդույթը

Սկզբում կանգ կառնեմ պատմական հետնախորքի վրա, որն, ինչ խոսք, մեծ նշանակություն ունի մեր պետությունների ներկայիս փոխհարաբերությունների համար: Պատմականորեն Հայաստանն ու Վրասանը, հայ և վրաց ժողովուրդներն իրենց պետականությունները ստիպված են եղել կերտել մշակութային և ազգային ինքնության պահպանման համար պայքարի պայմաններում: Իհարկե, այս իրողությունը որոշակիորեն իր հետքն է թողել մեր հարաբերությունների ավանդույթների վրա, ստեղծել ընդհանուր ճակատագրի և փոխադարձ պատասխանատվության հոգեբանական գերակայություն, որը ստույգ քաղաքականության տեսանկյունից չէր կարող չփոխակերպվել ռազմավարական հետաքրքրությունների լրիվ համընկնման գիտակցության, այն իմաստով, որ երկու երկրներն էլ, վերջին հաշվով, ինքնապահպանումը տեսնում են որպես ռազմավարական շահ՝ այս բարդ և փոխկապակցված աշխարհում: Սակայն, եթե միջին դարերում նկատի էր առնվում մշակութային, կրոնական, լեզվական, անգամ՝ էթնիկական ինքնապահպանումն, ապա տվյալ պարագայում խոսքն, իհարկե, գնում է ազգային. կայուն պետականության զարգացման մասին:

> *«Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ցանկացած մակարդակում գոյություն չունի հակամարտության ավանդույթ:»*

Ես հատկապես ընդգծեցի պատմական ավանդույթը, որպեսզի անմիջապես կատարեմ առաջին և լիովին հիմնավորված հետևությունը. Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների

ցանկացած մակարդակում գոյություն չունի հակամարտության ավանդույթ: Ընդհակառակը, գոյություն ունի ազգային ճակատագրի ընդհանրության, փոխկապվածության, համագործակցության, փոխադարձ օգնության, մշակույթների փոխհարստացման գիտակցության ավանդույթ: Դա կարևոր փաստարկ է, բայց ոչ եզակի: Թեև, մարդկության պատմության մեջ և ներկայումս էլ քիչ չեն հակառակ օրինակները, երբ խոսքը գնում է մշակութային և էթնիկապես մոտ ժողովուրդների մասին, չխոսելով արդեն այլ իրողությունների մասին:

Վերը նշվածից ելնելով մենք հիմնավոր կերպով կարող ենք ասել, որ ներկա փուլում հարաբերությունների զարգացման համար պատմական ավանդույթն ինքնըստինքյան հանդիսանում է, եթե ոչ որոշիչ, ապա խիստ կարևոր փաստարկ: Առանց այդ փաստարկի հետ հաշվի նստելու, հնարավոր չէ ծանրակշիռ դատողություններ անել և ունենալ լրիվ, իրական պատկերացում այն մասին, թե ինչպես են զարգանում հայ-վրացական կապերն այսօր, Քրիստոսի ծնունդից հետո երկրորդ հազարամյակի վերջում, մեր այս խիստ փոփոխական աշխարհում:

Երբ մենք խոսում ենք պատմական ավանդույթի մասին, չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ պատմության տարբեր փուլերում մեր ժողովուրդներին վիճակված է եղել զարգանալ միասնական պետության կազմում կամ նույն տիրապետության տակ. Վրաստանն ու Հայաստանը տարածքային առումով եղել են Ռուսական կայսրության, այնուհետև՝ Խորհրդային Միության մաս: Խորհրդային շրջանը մի շարք առումներով ես, այնուամենայնիվ, կանվանեի կարևորագույններից մեկը: Նախ և առաջ այն պատճառով, որ մենք նոր-նոր ենք անկախություն ձեռք բերել, մեզ վիճակված է կառուցել անկախ պետականություն՝ առաջին հերթին ձևափոխելով եղած պետական կառույցները: Միաժամանակ, կրկին ձեռք բերելով պետականության հիմքերը՝ պետական սահման, բանակ, անկախ դրամական համակարգ, լրիվ տրամաբանական է և արդարացված, որպեսզի փորձենք պահպանել այն ամեն լավը, ավելի ճիշտ՝ այն օգտակարը, որը մեզ կապում էր ոչ վաղ անցյալում, նախ և առաջ՝ տնտեսության բնագավառում: Ինչպես հայտնի է, կոոպերացիայի աստիճանը Խորհրդային Միությունում շատ ավելի բարձր էր, քան անգամ այժմյան Եվրոպական Միությունում: Բայց անմիջապես պետք է արձանագրել, որ ԽՍՀՄ կազմում Վրաստանի և Հայաստանի տնտեսական կոոպերացիան որակապես, էապես այլ հասկացություն էր, քան տարբեր ֆիսկալ համակարգերով և տնտեսական բնութագրիչներով, հարկային տարբեր համակարգեր ունեցող երկու անկախ պետությունների տնտեսական ինտեգրացիան: Սակայն այդ ավանդույթն էլ իր էությամբ կառուցողական է. ոչինչ մեզ չի խանգարում տնտեսապես ինտեգրվել և փոխհարստացնել միմյանց:

«...Համաշխարհային հանրությունը Հարավային Կովկասի շրջանը դիտարկում է որպես միասնական աշխարհաքաղաքական և տնտեսական տարածություն:»

Մինչ հաջորդ թեզին անցնելը, կցանկանայի ընդգծել գոյություն ունեցող ևս մեկ շատ կարևոր ավանդույթ, ավելի ճիշտ՝ իրողություն, որն, ինչ խոսք, ազդում է մեր հարաբերությունների վրա: Դարեր, հազարամյակներ շարունակ վրացական ու հայկական համայնքները ոչ միայն դրացի են եղել, այլև ապրել են միասին, նույն տարածքներում: Օրինակ, Թբիլիսիում, Վրաստանի այլ վայրերում հայկական ու վրացական համայնքներն ապրում են միախառնված, և այդ գործոնը ևս մեծապես իր ազդեցությունն է թողնում Հայաստանի ու Վրաստանի, հայերի ու վրացիների փոխհարաբերությունների մշակույթի ու

Նիկոլոզ Նիկոլոզիշվիլին ծնվել է 1965 թվականի մայիսի 9-ին, Թբիլիսիում: 1882-ին ավարտելով միջնակարգ դպրոցն ընդունվել է Թբիլիսիի պետական համալսարանը, որն ավարտել է 1988 թվականին՝ դասական բանասիրություն մասնագիտությամբ:

Գրաբարի ուսումնասիրման նպատակով 1986-88թթ. վերապատրաստում է անցել Երևանի պետական համալսարանում:

1988-93թթ. աշխատել է Թբիլիսիի պետական համալսարանում՝ որպես գիտաշխատող:

1993-95թթ. եղել է «Իվերիա-էքսպրես» անկախ օրաթերթի գլխավոր խմբագիրը:

Աշխատանքին զուգահեռ 1991-ին ընդունվել և 1995 թվականին ավարտել է Թբիլիսիի Հոգևոր ակադեմիան՝ քրիստոնեական մշակույթի պատմություն մասնագիտությամբ:

1995 թվականից մինչև 1998 թվականի մարտը եղել է Վրաստանի երիտասարդության հարցերի պետական դեպարտամենտի նախագահը:

1998 թվականի մարտին նշանակվել է Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան:

էթիկայի վրա:

Փոխհարաբերությունները՝ տարածաշրջանային գործընթացների համատեքստում

Հարավային Կովկասը միշտ նշանակալի դեր է խաղացել Եվրասիայում առկա գործընթացների խթանման և զարգացման խնդրում: Սրա գլխավոր առանձնահատկությունն այն է, որ Կովկասում են խաչաձևվում արևմուտքը հյուսիսին ու հարավին կապող կարևորագույն հաղորդակցության ուղիները: Ցավոք սրտի, այս հանգամանքը երբեմն դժբախտ հետևանք է ունեցել մեր ժողովուրդների համար: Քսաներորդ դարի վերջին կարևորագույն աշխարհաքաղաքական գործոն է դառնում Կասպիական ավազանի բնական հարստությունների նկատմամբ ինդուստրիալ և պոստինդուստրիալ երկրների գնալով աճող հետաքրքրությունը: Այսուհանդերձ, Եվրասիական միջանցքի գաղափարը չի սահմանափակվում միայն էներգետիկ կամրջի, նավթա և գազամուղերի կառուցման նախագծերով: Եվրամիության հովանու ներքո մշակված ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը նախատեսում է տարանցիկ և հաղորդակցության հնարավորությունների լայն դաշտ: Վերջերս Բաքվում կայացավ «Նոր մետաքսի ճանապարհ» կոնֆերանսը, որին մասնակցեց նաև Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանը: Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի և Վրաստանի նախագահների՝ 1998 թվականի նոյեմբերի 20-ին, ստորագրած երկու երկրների համագործակցության հետագա խորացման մասին դեկլարացիայում խոսվում է ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում ակտիվ համագործակցության պատրաստակամության մասին, դրանով իսկ վերահաստատելով իրենց դրական դիրքորոշումը գլոբալ և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների նկատմամբ: Դրանից բացի, այդ նույն դեկլարացիան հռչակում է, որ երկրները վերահաստատում են իրենց վճռականությունը՝ համագործակցելու նոր կազմավորված միջազգային կազմակերպության՝ Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում: Մի կառույց, որը մեր գնահատմամբ հրաշալի հեռանկար ունի:

«Հայաստանին չի կարելի մեկուսացնել, առավել ևս՝ նա ինքը չի ցանկանում դյուզն ինչ մեկուսանալ տարածաշրջանում առկա գործընթացներից:»

Ինչ խոսք, մեծ նշանակություն ունի նաև համակովկասյան գործընթացների զարգացումը: Կովկասյան բոլոր չորս պետությունները (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան և Ռուսաստան) ստորագրել են Կիսլավոդսկի դեկլարացիան, որտեղ արձանագրել են կովկասյան տարածաշրջանում փոխհարաբերությունների սկզբունքները:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային առումով մեր երկկողմանի հարաբերություններին, ապա, ինչ խոսք, մեզ մեծապես մտահոգում է Լեռնային Ղարաբաղի շուրջ ծագած իրավիճակը: Վերջերս Վրաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց, որ այդ հակամարտության ընթացքում Վրաստանը կարողացավ պահպանել չեզոք դիրք: Միաժամանակ, անհրաժեշտ եմ համարում մեջբերել «Համագործակցության մասին դեկլարացիայի» ևս մեկ կետ. «Կողմերը ընդգծում են, որ համաշխարհային հանրությունը Հարավային Կովկասի շրջանը դիտարկում է որպես միասնական աշխարհաքաղաքական և տնտեսական տարածություն, և հայտարարում են, որ երկկողմ հարաբերությունների առաջնահերթային ուղղությունը համաշխարհային կառույցներում ընդգրկվելու երկու երկրների ձգտումներին խոչընդոտող տարածաշրջանում առկա մի շարք հիմնախնդիրների և հակամարտությունների արագ կարգավորումն է: Միաժամանակ, կողմերը հաստատում են իրենց հավատարմությունը տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, սահմանների անձեռնմխելիության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներին»:

Ինչ վերաբերում է ստույգ նախագծերի իրականացման համար համագործակցությանն, ապա արդեն պայմանավորվածություն կա վերականգնել Այրում-Սադախլո երկաթգիծը, Երևան-Գյումրի-Խաշուրի-Բաթումի և Վանաձոր-Այրում-Թբիլիսի ավտոմոբիլային ճանապարհները: Բաթումի և Փոթի նավահանգիստների բեռնահամալիրների շինարարության, վերակառուցման և շահագործման աշխատանքներում նաև հայկական ընկերությունների հնարավոր մասնակցությունը որոշելու համար համատեղ ստեղծվել է երկկողմ աշխատանքային խումբ:

Ես անհրաժեշտ եմ համարում թվարկել այս պահերը, որպեսզի ընդգծեմ. Հայաստանն արդեն իսկ աշխույժ մասնակցում է «Եվրասիական տրանսպորտային միջանցքի» շինարարությանն ու զարգացմանը՝ ելնելով բացառապես սեփական ազգային շահերից: Այդ իսկ պատճառով ես բոլորովին անհիմն եմ համարում ինչ-ինչ տեղ հնչող այն կարծիքները, թե Հայաստանը մեկուսացվել է կամ ինքնամեկուսացել: Հայաստանին չի կարելի մեկուսացնել, առավել ևս՝ նա ինքը չի ցանկանում դյուզն ինչ մեկուսանալ տարածաշրջանում առկա գործընթացներից: Ես վստահ եմ, որ մեր պետությունների հետագա փոխհարաբերությունները կզարգանան ոչ միայն երկկողմանի, այլև համակովկասյան գործընթացի շրջանակներում: Առավել ևս, որ արդեն սկսվել է եվրոպական կառույցներում, այդ թվում՝ կոլեկտիվ անվտանգության կառույցներում մեր պետությունների ինտեգրման գործընթացը:

Տնտեսական համագործակցությունը

Վերջին շրջանում մեր պետությունների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունները նկատելիորեն աշխուժացել են: Հայաստանի Հանրապետության հետ Վրաստանի ունեցած առևտրական հաշվեկշիռը 1997 թվականին ունեցել է հետևյալ բնութագրիչները. Վրաստանի արտահանումը կազմել է 18 միլիոն 942 հազար ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 20 մլն. 803 հազար դոլար (բացասական սալդոն՝ 1 մլն. 861 հազար դոլար): 1998 թվականի վեց ամսվա ընթացքում արտահանումը կազմել է 8 միլիոն, ներմուծումը՝ 3 միլիոն: Ինչ խոսք, բեռնաշրջանառության և առևտրի այս ծավալը շատ առումներով չի համապատասխանում մեր պետությունների ներուժին, և վերջինիս աշխուժացման համար անհրաժեշտ է հետագա աշխատանք ծավալել: Արդեն աշխույժ աշխատանք է սկսել առևտրա-տնտեսական համագործակցության հարցերի հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովը, թեև այդ աշխատանքներին դեռևս հարկ է շարժունակություն հաղորդել:

Փոխհարաբերությունները հաջողությամբ են զարգանում էներգետիկ բնագավառում: Մեր երկրների էներգետիկ համակարգերն աշխատում են զուգահեռ ռեժիմով, քննարկվում են էլեկտրահաղորդման նոր բարձրավոլտ գծի կառուցման հնարավորությունները:

Կովկասն, այդ թվում՝ Վրաստանն ու Հայաստանն ունեն զբոսաշրջության զարգացման փայլուն հեռանկարներ: Մեր երկրների համապատասխան կառույցները միջոցներ են ձեռնարկում, որպեսզի նպաստավոր պայմաններ ստեղծվեն «Մետաքսի ճանապարհ» ծրագրի շրջանակներում միասնական տուրիստական արտադրանքի մշակման և ներդրման համար:

Ջավախք

Մենք վստահ ենք, որ երկու պետությունների միջև բարեկամական փոխհարաբերությունների զարգացումը հնարավորություն է ստեղծում հավասարության, բարիդրացիության, անկախության, փոխադարձ շահի ու միմյանց ինքնիշխանության հարգման հիման վրա միջպետական կապերի նոր մակարդակի հասնելու համար: Մի շարք հիմնարար փաստաթղթերում նշված է, որ հայկական կողմը ողջունում է Վրաստանում, այդ թվում՝ հավաքական բնակավայրերում ապրող հայերի ազգային-մշակութային պահանջների բավարարման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն ուղղված Վրաստանի ղեկավարության գործունեությունը: Մենք շատ զգայուն ենք վերաբերվում այդ հարցին և պատրաստ ենք ամենայնս աջակցել Վրաստանի հայ համայնքի մշակութային ժառանգության պահպանությանը: Այն մի կողմից պահպանել է իր սերտ կապը հայկական մեծ մշակույթի հետ, մյուս կողմից մեծ ներդրում է ունեցել Վրացական մշակույթի զարգացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ըստ Ձեզ, համարժե՞ք են արդյոք Հայաստանի ու Վրաստանի քաղաքական ու տնտեսական հարաբերությունները:

-Ինչ խոսք, դրանք համարժեք են: Դրա հաստատումն էր նաև Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ 1998թ. նոյեմբերին Թբիլիսի կատարած այցը: Վերջինիս ընթացքում ընդունված փաստաթղթում հատկապես ընդգծվում է երկու կողմերի համարժեք քայլերը թե քաղաքական, թե տնտեսական ոլորտներում:

-Դուք ղեկավարել եք անկախ մամուլ: Որպես զանգվածային լրատվամիջոցներին մոտ կանգնած անձնավորություն, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի անկախ մամուլի ներկա կացությունը:

-Կարելի է միայն ողջունել հետխորհրդային շրջանում անկախ և համարձակ թերթերի առաջացումը: Ես մեծ ուշադրությամբ հետևում եմ հայկական մամուլին թե հայալեզու, թե ռուսալեզու: Իհարկե, անկախ մամուլի առաջացումն արդեն այն բանի վկայությունն է, որ մեր երկրներում ընթացող ժողովրդավարական գործընթացներն անշրջելի են, և մենք հավատարիմ ենք ժողովրդավարության սկզբունքներին ու ամենայնս նպաստում ենք համապատասխան կառույցների կայացմանը:

-Նոյեմբերի 15-ին Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ ցուցադրվեց Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների մասին պատմող ֆիլմ: Դրանում

խոսքն այն մասին էր, որ Վրաստանում հայկական մշակութային կոթողների հանդեպ չկա բավարար հոգատարություն: Ե՞րբ կփոխվի նման մոտեցումը, ե՞րբ այդ կոթողները կվերադարձվեն հայկական համայնքին: Չէ՞ որ դա մարդու իրավունքների ոտնահարում է:

-Ցավոք սրտի, մեր օրերում ավիրվում են ոչ միայն հայկական մշակույթին պատկանող հուշարձաններն, այլև վրացական, Վրաստանում ապրող այլ ժողովուրդների մշակույթներին պատկանող կոթողները: Ընդգծում եմ՝ ցավոք սրտի: Եթե խորհրդային վերջին տարիներին պատմական շինությունների պահպանությունը գտնվում էր ամենաբարձր մակարդակի վրա, ապա այժմ մենք չունենք այդքան ֆինանսական հնարավորություն, չկան այնքան դրամական միջոցներ, որպեսզի կարելի լինի ինչպես հարկն է պահպանել այդ հուշարձանները:

Բայց ես չեմ կարող համաձայնել այն տեսակետին, որ դա պետական քաղաքականություն է: Նման դեպքերում հարկ է հստակ տարբերակել պետական քաղաքականությունն ու առանձին մարդկանց գործունեությունը:

-Ներեցեք, բայց Խոջիվանքում կառուցված վրացական եկեղեցու օծմանն անձամբ նախագահ Շևարդնաձեն մասնակցեց, այն դեպքում, երբ այնտեղ ավիրվել էին բազմաթիվ գերեզմաններ, այդ թվում՝ տասնյակ հայ մտավորականների: Ինչպե՞ս կարելի է պնդել, որ սա պետական քաղաքականություն չէ:

-Բանն այն է, որ հաճախ բնակչությանը մատուցվում է այն թյուր կարծիքը, թե Խոջիվանքը վերացվել է Վրաստանի ներկա իշխանությունների օրոք: Խոջիվանքի հարցը, պետք է մեկնաբանել այնպես, ինչպես այն կա: Խոջիվանքի գերեզմանոցը վերացվել է 1937 թվականին, և այնտեղ թաղված էին ոչ միայն հայեր, այլև վրացիներ, այլ ազգերի ներկայացուցիչներ: Հետագայում այստեղ հիմնվել է այգի: Ինչ վերաբերում է հայ գործիչների պանթեոնին, որտեղ թաղված էին շուրջ երեք տասնյակ հայ մեծանուն այրեր, ապա այն պահպանվել է անգամ երեսնական թվականներին: Իսկ վերոհիշյալ գերեզմանատան տեղում հիմնված այգու տարածքում այժմ ընթանում է եկեղեցու շինարարություն:

-Պարոն դեսպան, ըստ Ձեզ, կիրառելի է արդյոք միևնույն մոդելը ղարաբաղյան և աբխազական հիմնախնդիրների լուծման համար:

-Այդ մասին շատ է խոսվում: Մենք գտնում ենք, որ միևնույն մոդելն անընդունելի է. յուրաքանչյուր հակամարտություն ունի իր յուրահատուկ ծագումնաբանությունը: Այդ իսկ պատճառով, հարկ է հաշվի առնել նշված հանգամանքը, պատմական ու ժամանակակից իրողությունները: Ղարաբաղյան, աբխազական, հարավ-օսական, հյուսիս-կովկասյան հակամարտությունները բոլորովին տարբեր են միմյանցից: Ուստի դրանց լուծման համար միևնույն մոդելը կիրառելի չէ:

-Ինչպիսի՞ն է Վրաստանի պետական դիրքորոշումն արտասահմանի հայրենակիցների կողմից վրացահայ համայնքին ցույց տրվող մարդասիրական և տնտեսական օգնության նկատմամբ:

-Ինչ խոսք, միայն ողջունել կարելի է: Նման փաստեր այժմ էլ կան:

-Ինչպե՞ս եք գնահատում Ջավախքից կատարվող էմիգրացիան:

-Սամցխե-Ջավախեթիում էմիգրացիոն գործընթաց կա, այնպես, ինչպես Վրաստանի այլ շրջաններից կամ Հայաստանից: Այն գերակշիռ մասով պայմանավորված է սոցիալական խնդիրներով:

-1998 թվականի հոկտեմբերի 1-ին Վրաստանի նախագահը ստորագրեց Նինոծմինդայում նոր ստուգիչ անցակետի ստեղծման մասին փաստաթուղթ. Ջավախքից Հայաստան և հակառակ ուղղությամբ մարդկանց առանց մուտքի թույլտվության արգելվում է անցնել:

-Իրոք, նման հրամանագիր ստորագրվել է, սակայն, այս պարագայում ոչ ճիշտ մեկնաբանություն է տրվում: Մինչ այդ հրամանագիրն էլ այդտեղ եղել է ստուգիչ անցակետ: Պարզապես Վրաստանի նախագահի հրամանագրով Սադախլո-1, Սադախլո-2 երկաթուղային և ավտոմոբիլային անցակետերի նման Գուգութին և Նինոծմինդան ստացել են միջազգային ստուգիչ-անցակետի կարգավիճակ:

Ինչ վերաբերում է մուտքի թույլտվությանն, ապա մեզ մոտ առանց վիզային հարաբերություններ են, այնպես որ Հայաստանի և Վրաստանի քաղաքացիներն ազատորեն կարող են անցնել մի երկրից մյուսը:

-Ամեն անգամ, երբ Ջավախքում ի հայտ են գալիս ապակայունության նշաններ, Վրաստանի և Հայաստանի պաշտոնական այրերը նշում են, որ դրանում շահագրգռված են երկու երկրներից դուրս գտնվող որոշակի ուժեր: Ըստ Ձեզ, ի՞նչ ուժեր կարող են դրանով շահագրգռված լինել:

-Այն ուժերը, որոնք չեն ցանկանում, որ մեր երկրները լինեն անկախ, ամուր, զարգացող պետություններ: Ես վստահ եմ, որ ոչ Հայաստանը, ոչ Վրաստանը չեն ցանկանում հակամարտության նոր օջախ ունենալ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժինը

շնորհավորում է Ձեր Ամանորը և Սուրբ Ծննունդը, ցանկանալով նորանոր հաջողություններ և ամենայն բարիք

Մեր հետագա միջոցառումների մասին կարող եք տեղեկանալ «Հայաստանի հանրապետություն», «Ազգ» և «Երկիր» օրաթերթերում զետեղված մեր հայտարարություններից

Նախորդ դասախոսությունների տեքստերը պահվում են Ինտեռնետ ցանցում, հետևյալ հասցեով.

www.aua.am/aua/extens/lectures

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Ջորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝